Թեստ 1

1-12-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

1. Ը ձայնավորի հնչյունափոխություն կա

1) մթնկա
2) կապտուկ
3) նկարչություն
4) թանձրություն

բառում:

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

1) վար...ապետ, ար...ար, զվար... (դ կամ թ)
2) երկնամու..., կո...պեք, մա...թանք (ղ կամ խ)
3) ոսկ...ազ, տար...երջ, հոգ...իճակ (և կամ եվ)
4) ա...վակ, ա...տուլտ, ագ...ավ (ր կամ ռ)

3. Բոլոր բառերի բաղադրիչները գծիկով գրվող շարքն է՝

1) դեղնա (կարմիր), քաղաքից (քաղաք), հագած (կապած)
2) մանր (մունր), զուգել (զարդարել), դեմ (դիմաց)
3) լռիկ (մնջիկ), հայ (ֆրանսիական), թև (թևի)
4) ռուս (ճապոնական), հինգ (վեց), ցուցահանդես (վաճառք)

4. Դարձվածք կա

1) Դավիթն էլ ահա, սարի գագաթին
Կանգնած, գոռում է վիշապի նման:
2) Թե մոռացար քո բարբառը,
Քո մայրենին քոնը չէ...
3) Նրա ժպիտը մեղմ էր ու դողդոջ,
Որպես լուսնյակի ժպիտը տխուր...
4) Մեր բաժի՛ն Աստված, քո սիրտն էլ քար էր,
Որ մեզ քարերը տվիր նվեր...

հատվածում:

5. Բարդ բառերի շարքն է՝

1) մայրաքաղաք, երկաթուղի, ուղեբեռ
2) տարեվերջ, երգչախումբ, հողակտոր
3) շքեղազարդ, պարընկեր, լուսամփոփ
4) սրտաբաց, հուշարձան, գերխնդիր

6. Հականիշ բառազույգերի շարքն է՝

1) սքողված-անթաքույց, ընդդեմ-հակառակ
2) ջրարբի-անջրդի, բիրտ-դաժան
3) բերկրալից-թախծոտ, եղեմ-դրախտ
4) հնարամիտ-անճար, բեղուն-անպտուղ

7. Շարքի բոլոր բառերը ենթարկվում են *ու* հոլովման՝

1) մատանի, խոսել, կաղին
2) բարդի, ամուսին, տատ
3) հայելի, կիրակի, բանալի
4) մարդ, պատմել, գետաձի

8. Դերանուն կա

1) Մռայլ գիշերն է լռում,
Թախիծով լի և անհույս...
2) Հոգիս արթնացավ հարավի բույրից...
3) Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է երգում...
4) Անզոջալի առաջ գնա, ինչ-որ լինի, թող լինի...

հատվածում:

9. *Ա* խոնարհման բայերի շարքն է՝

1) գնացին, խաղում էր, առավ
2) կարդացե՛ք, զարգացել է, զայրացավ
3) թեյեցին, զղջալու են, մեծացավ
4) դողացող, հագավ, սկսած

10. *Վառել էին բոլոր ճրագները, և կամարների տակ դեռ մութ էր, նույնիսկ թվում էր, թե .....*

նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

1) լուսավոր էր եկեղեցու բեմը:
2) մեկը լուցկի վառեց՝ քարե աստիճաններ լուսավորելու:
3) արդեն այգաբաց է:
4) ճրագների լույսից ավելի էր թանձրանում խավարը:

11. Անձնավորում պարունակող հատվածն է՝

1) Մանուկ էի՝ ամեն ինչին անգիտակ,
Մի հասկն ի՞նչ էր, տրորեցի ու անցա:
2) Հայրս տեսավ, մտերմորեն նախատեց.
«Հացն ափսոս է, չեն տրորի ու անցնի...»
3) Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով ...:
4) Երբ Հայաստան եմ ասում,
Քարն արթնանում է քնից:

12. Կետադրական սխալ կա
1) Տեսնելով, որ եղանակը ցուրտ է, նա որոշեց մնալ տանը:
2) Արմենը զարմացավ՝ այդ քաղաքում հանդիպելով հին ընկերոջը ու սկսեց մանրամասն հարցուփորձ անել:
3) Թվում է նժույգը հպարտ էր, որ մեջքին կրում է հայոց աշխարհի պարծանքին՝ Դավիթ - Բեկին:
4) Իբրև կին՝ նա ազնվական էր այս բառի խոր իմաստով, որպես իշխանուհի՝ փառատենչ, մեծամիտ:

նախադասության մեջ:

13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Տաք երեկոներին մինչև իսկ բացօթյա քնում էի տատիս նվիրած թաղիքի վրա:
2. Այդ պատճառով էլ ամբողջ ամառ ես այգում էի անցկացնում, բացի, իհարկե, անձրևոտ օրերից:
3. Երբեմն տատս էլ էր քնում այգում. մի խուրձ խոտ էր բերում, փռում իմ օթևանի մոտ, պառկում ու երկարաբարակ որևէ բան էր պատմում:
4. Ես սիրում եմ մոտ գտնվել բնությանը, իսկ հնարավորության դեպքում փորձում եմ շատ վայելել նրա պարգևած հաճելի անդորրությունը, առինքնող այն ակնթարթները, որոնք հոգիդ լցնում են յուրօրինակ խաղաղությամբ:

Պատասխան՝ _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Տղամարդը, դողդոջուն ձեռքերը կրծքին, ակնդետ նայում էր ականակիր խավարին:

Պատասխան՝ սխալ է՝ _____
պետք է լինի՝ _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Ամեն համայնք և ընտանիք պետք է մտածեն իրենց բնակավայրի, հայրենիքի բարգավաճման մասին:

Պատասխան՝ *սխալ է* _____
պետք է լինի _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Ես ..... Արաքսի ..... , իսկ քիչ հեռվում՝ ուղիղ ..... դիմաց, Արարատն է՝ մեր ..... մեծ որբն ու տարագիրը:

(1. ես, 2. պատմություն, 3. թափառել, 4. ափ)

Պատասխան՝ 1.---------- *2.----------*

3.---------- *4.----------*

17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Վայրագ հրոսակախմբերի հանկարծակի հարձակումներից զգուշանալու համար ժողովուրդը լեռան բարձունքին հինավուրց վանքում, կախում է մի հսկա զանգ: 2. Այն իր աշխարհասփյուռ ղողանջը տարածում էր հեռու՜-հեռու, և անդնդախոր կիրճերն ու երկնամուխ լեռները, նրա ղողանջյունը արձագանքելով, մարդկանց վաղօրոք տեղեկացնում էին մոտալուտ վտանգի մասին ու ոտքի հանում:
3. Արյունռուշտ Լենկթեմուրը, մահ ու սարսափ սփռելով, հափշտակելով ու գերեվարելով գալիս հասնում է Արաքսի՝ երփնավառ բուսականությամբ հարուստ կանաչազարդ ափը և հարթ դաշտավայրում բանակ զարկում: 4. Հաջորդ օրը արևածարավ բռնակալի զորքը պիտի անցներ փրփրառատ գետն ու արշավեր շեն ու հարուստ գյուղերի վրա:
5. Նույն օրը՝ աշխարհավեր ավարառուի վրանն է մտնում հայրենադավ մի իշխան (ավա՜ղ, ազգուրացներ միշտ էլ եղել են)՝ նրան ծառայելու պատրաստակամությամբ: 6. Երբ անարգ դավաճանը հայտնում է ժողովրդին միավորող փրկարար զանգի գաղտնիքը, Լենկթեմուրը խորաքնին նայում է ընչաքաղց ու ծախու մատնիչին, ապա ամբարտավան կեցվածքով բարբառում.
- Գնա այրի՛ր զանգը, այնպես արա՛՝ այլևս երբեք չլսվի նրա ղողանջը: 7. Շատ ոսկի ու արծաթ կստանաս:

II

1. Եվ հոգին ծախած մարդը իր համախոհների հետ մթնկա գիշերով զանգի տակ մեծ խարույկ է անում:
2. Կրակի հսկայական բոցերը կլանում են զանգը՝ իսպառ կտրելով նրա զրնգուն ձայնը:
3. Վանքի վանահայրը՝ սպիտակամորուս մի ծերունի, հապճեպ բարձրանում է զանգակատուն և փութկոտ շարժումներով քաշում պողպատե զանգի ճոպանը. կոչնակը լուռ էր:
4. Թշնամու հանկարծակի գրոհից խուճապահար՝ մարդիկ զարմացած հարցնում են իրար.
--- Զանգն ու՞ր է, զանգն ու՞ր է...
5. Ոչ իբրև պատասխան՝ լեռներն արձագանքում էին՝ զանգը զու՜ր է, զանգը զու՜ր է :
6. Անունն այդտեղից էլ մնաց՝ Զանգեզուր:

17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

17. II հատվածից դու՛րս գրիր մեկ բաղադրյալ ստորոգյալ:

Պատասխան՝ _____

18. I հատվածից դու՛րս գրիր կրկնավոր բարդությունը:

Պատասխան՝ _____

19. I հատվածից դու՛րս գրիր մեկ անհոդակապ բարդ բառ:

Պատասխան՝ _____

20. I. 2 նախադասությունից դու՛րս գրիր ժամանակի մակբայը:

Պատասխան՝ _____

21-25-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

21. Հարաբերական ածական է՝

1) հարուստ
2) պողպատե
3) հարթ
4) մեծ

22. I . 5 նախադասության մեջ *չկա*

1) անձնական
2) անորոշ
3) ցուցական
4) հարաբերական դերանուն:

23. I հատվածում հրամանական եղանակի բայ պարունակող նախադասություն է՝

1) 3
2) 4
3) 5
4) 6

24. Լենկթեմուրի մասին բնորոշումներից ո՞րը *չի* գործածվել տեքստում:

1) աշխարհավեր
2) արյունռուշտ
3) ընչաքաղց
4) արնածարավ

25. II հատվածում հարակատար դերբայ պարունակող նախադասություն է՝

1) 2
2) 3
3) 4
4) 5

26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

26. Գրի՛ր I հատվածից այն բարդ նախադասության համարը, որը կապակցվել է դերանունով:

Պատասխան՝ _____

27. I հատվածից դու՛րս գրիր մեկ անկանոն բայ:

Պատասխան՝ _____

28. Գրի՛ր I հատվածի այն նախադասության համարը, որում հարկադրական եղանակի բայ կա:

Պատասխան՝ _____

29. II. 3 նախադասությունը քանի՞ բաղադրիչ պարզ նախադասությունից է բաղկացած:

Պատասխան՝ _____

30-32-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

30. Երկհնչյունի սղում կա

1) I. 2
2) II. 1
3) II. 3
4) I. 4

նախադասության մեջ:

31. *Եվ հոգին ծախած մարդը իր համախոհների հետ մթնկա գիշերով զանգի տակ մեծ խարույկ է անում*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) **մարդը** – հասարակ գոյական
2) **ծախած** - ածական
3) **անում է** - բայ, սահմանական եղանակ
4) **խարույկ** - գոյական, անորոշ առում

32. Կրակի հսկայական բոցերը կլանում են *զանգը*՝ իսպառ կտրելով նրա զրնգուն ձայնը

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) ենթակա
2) հանգման անուղղակի խնդիր
3) ուղիղ խնդիր
4) միջոցի անուղղակի խնդիր